ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 13-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Լ. Ն. Ներսիսյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվեալովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ցա. Ի. Խաչիկյանը: Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա նշեց, որ հաշվետու տարում ակադեմիայի և նրա ստորաբաժանումների գործունեության գլխավոր ուղղությունն է եղել գիտական աշխատանքի արդյունավետության և որակի հետագա բարձրացումը: Խոսելով մեր հասարակության կյանքում գիտության հարաճուն դերի մասին, Վ. Հ. Համբարձումյանն ընդգծեց, որ ՀԿԿ Կենտկոմը, հանրապետության կառավարությունը և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան բազմակողմանի օգնություն են ցույց տալիս Հայաստանի գիտությունների ակադեմիային:

Կանգ առնելով ակադեմիայի ստորաբաժանումների գործունեության վրա, Վ. Հ. Համբարձումյանը նշեց հասարակական գիտությունների դերը: Նա ընդգծեց Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին նվիրված աշխատությունների և հայ արվեստին նվիրված միջազգային երրորդ գիտաժողովի նյութերի կարևոր նշանակությունը: Անդրադառնալով ֆունդամենտալ գիտությունների դերին, Վ. Հ. Համբարձումյանն ասաց, որ մեր հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղիներով են որոշվել գիտական հետազոտությունները էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիայի և այլ բնագավառներում:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1978 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ գլխավոր գիտնական-քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը: Նա ասաց, որ անցած տարում ՀՍՍՀ ԳԱ գիտական և կազմակերպչական գործունեությունը նպատակամղված է եղել 10-րդ հնգամյակում հանրապետության ժողովրդական տնտեսության առջև դրված խնդիրների կատարմանը: Ժողովրդական տնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորման ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել: Անցած տարի մշակվել է 482 թեմա ընդգրկող 170 պրոբլեմ: Գ. Ա. Գալոյանը նշեց, որ ՀՍՍՀ ԳԱ գիտական հիմնարկների և արտադրական կազմակերպությունների կոլեկտիվներն ընդհանուր առմամբ հաշողությամբ են կատարել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական և հասարակական գիտությունների բոլոր հիմնական ճյուղերի գծով պլանավորված աշխատանքները:

Վերջում զեկուցողը կանգ առավ գիտական խորհուրդների գործունեության, գյուտարարական և պատենտա-լիցենզիոն աշխատանքի, կադրերի պատրաստման և այլ հարցերի վրա:

Հանրապետության գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ զեկուցման քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Տ. Ասլանյանը:

Ժողովում «Այրման պրոցեսներն անօրգանական նյութերի ստացման պրոբլեմում» զեկուցումով հանդես եկավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Գ. Մերժանովը:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն:

Բեղմնավոր գիտական գործունեության համար «Մեծարման գրի» արժանացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Իոսիֆյանը: Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Գ. Սևակը, Գ. Բ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ա. Ա. Մաթևոսյանը, Գ. Մ. Ավագյանը, երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Գ. Ն. Փիջյանը, ֆիզիկամաթեմա-

տիկական գիտությունների դոկտոր Է. Ե. Խաչիկյանը։ 1978 թ. գիտահետազոտական հաջող գործունեության համար 30 գիտնականներ արժանացան «Գովեստագրի»։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 10-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1978 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկներն իրենց աշխատանքի հիմքում դնելով ՍՄԿԿ XXV համագումարի որոշումները, ծավալուն աշխատանք են կատարել գիտահետազոտական պլանների կատարման ուղղությամբ։ Բաժանմունքի գիտական հիմնարկները 37 պրոբլեմների գծով մշակել են 118 թեմա, ավարտել են 26-ը։ Այնուհետև Գ. Բ. Ղարիբջանյանն անդրադարձավ բաժանմունքի գիտական հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի անդամների գործունեության, նշելով ձեռք բերված հաջողություններն ու եղած թերությունները։

Գ. Բ. Ղարիբջանյանի զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Լ. Ս. Խաչիկյանը և Բ. Ն. Առաքելյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին գիտական հետազոտությունների արդյունավետության և արտադրանքի որակի բարձրացման, գիտական կոորդինացիայի բարելավման, երիտասարդ կադրերի պատրաստման, գիտական գործուղումների դրրվածքի և տպարանների աշխատանքի բարելավման, ազգագրական հուշարձանների ու օտար աղբյուրների հրատարակության անհրաժեշտության և այլնի մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բ. Ղարիբջանյանը։

Ժողովում «Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքսային ծրագրի մասին» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Խ. Քոչարյանը։

Ընտրվեց բաժանմունքի բյուրոյի նոր կազմ։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 11-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1978 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Բրուտյանը։ Զեկուցողը վերլուծեց բաժանմունքի գիտական հիմնարկների՝ փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, դրականության և արվեստի ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի անդամների 1978 թ. գործունեությունը։ Գ. Ա. Բրուտյանը նշեց ձեռք բերված հաջողությունները ու տեղ գտած թերությունները, խոսեց բաժանմունքի առջև ծառացած խնդիրների մասին։

Հաշվետու զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Ա. Ռ. Հովնանեսյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Տ. Ղանալանյանը և Գ. Բ. Ջահուկյանը։ Նրանք խոսեցին աշխատանքային կարգապահության բարձրացման, գիտական կոորդինացիայի բարելավման, գիտական հետազոտություններում հաշվիչ տեխնիկայի օգտագործման, գիտական կադրերի պատրաստումը բարելավելու, մեկ հատորով հայ ժողովրդի պատմությունը սփյուռքահայությանը ներկայացնելու, հրատարակության ներկայացվող ձեռագիր աշխատությունների որակը բարելավելու և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան իրավագիտության դոկտոր Ա. Ա. Նսայանը և Հարտարապետության դոկտոր Ս. Խ. Մնացականյանը։ Ա. Ա. Նսայանը խոսեց միջազգային իրավունքի մեջ վաղեմիության պրոբլեմի, իսկ Ս. Խ. Մնացականյանը՝ Ախթամարի պատկերագրական համակարգի մասին։

Ընտրվեց բաժանմունքի բյուրոյի նոր կազմ։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ